ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 2(62), 31 մարտ, 2024թ.

ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԵՎՐՈՊՈԼՈՒՄ

Փետրվարի 27-ին Հայաստանի, Մոլդովայի, Վրաստանի, Ուկրաինայի ներկայացուցիչները ճանաչողական այցով հյուրընկալվել էին Բելգիայի Թագավորության դաշնային ոստիկանության քրեական վերլուծության վարչությունում: Կրթահամալիրից մասնակցում էր ուսումնամեթոդական և զարգացման վարչության միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Կարինե Սաֆարյանը:

Քրեական վերլուծության վարչության ռազմավարական վերլուծաբանները ներկայացրին, թե ինչպես է Բելգիայի ոստիկանությունում իրականացվում ռազմավարական վերլուծությունը, վերլուծաբանների հավաքագրման փուլերը, վերապատրաստման դասընթացները, վերլուծություններ կատարելու համար օգտագործվող ծրագրային ապահովումները:

Խորքային ներկայացվեց Բելգիայում 2023թ. ընթացքում փոստային և միջազգային առաքումների միջոցով թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ կատարված վերլուծությունը:

Այցի մասնակիցներից Կ. Սաֆարյանը հանդես եկավ երկու ելույթով: Առաջին ելույթը վերաբերում էր ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ կազմակերպական վարչության կազմակերպահրամայական և վերլուծության բաժնի կառուցվածքին և գործունեությանը: Երկրորդ ելույթը CEPOL-ի TOPCOP ծրագրի 3-րդ բաղադրիչի (Տարածաշրջանային սպառնալիքների գնահատում և հատուկ աջակցություն) շրջանակում ծրագրի մեկնարկից ի վեր կատարված աշխատանքների մասին էր:

Աշխատանքները շարունակվեցին Հաագայում տեղակայված Եվրոպոլի կենտրոնակայանում: Մասնակից երկրների ներկայացուցիչները համատեղ աշխատեցին նախանշված հանցավորության ութ ուղղություններից վերջին երեքի՝ կիբեռհանցավորության, զենքի ապօրինի շրջանառության և սեփականության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ զեկույցի նախագծի մշակման վրա: Երկրների կողմից ներկայացված նշված ուղղություններով վերլուծությունները համադրվել և սինթեզվել են՝ դուրս բերելով հիմնական եզրահանգումները: Դրանք վերաբերում են տարածաշրջանում հանցագործությունների հետագա շարժընթացի միտումներին, հանցագործության կատարման համար անհրաժեշտ ռեսուրսների հասանելիությանը, հանցագործների գործելաոճին, հանցագործությունների կատարման վրա տեխնոլոգիաների ազդեցությանը, միջազգային հանցավոր խմբերին, այլ հանցագործությունների հետ փոխկապակցվածությանը և իրավապահ մարմինների արձագանքին:

ԼԻՏՎԱ, ԼԱՏՎԻԱ, ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Փետրվարի 29-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում հյուրընկալվել էին Լիտվայի Հանրապետության ՆԳՆ կից հանրային անվտանգության ծառայության ղեկավար, գնդապետ Առունաս Պաուլաուսկասը, նույն ծառայության օպերատիվ արձագանքման խմբի գլխավոր մասնագետ, կապիտան Գիտիս Ֆուրմանավիչուսը և Լատվիայի Հանրապետության պետական ոստիկանության հասարակական կարգի գլխավոր վարչության պետի տեղակալ, գնդապետ Անսիս Պումպուրսը: Հյուրերին դիմավորեց Կրթահամալիրի ղեկավար կազմը՝ պետ, ոստիկանության գնդապետ Մանուկ Մուրադյանի գլխավորությամբ:

Ճանաչողական այցի ընթացքում հյուրերին ներկայացվեց ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի կառուցվածքն ու առաքելությունը: Մ.Մուրադյանը ծանոթացրեց իրականացվող բարեփոխումների արդյունքները և ապագայի ծրագրերը: Առանձնակի ընդգծվեց ձևավորման փուլում գտնվող Ոստիկանության գվարդիայի ուսումնական ծրագրերի մշակման և դրանց հիմքում ընկած օրենսդրական և պրակտիկ լուծումների ընթացքը:

Ա.Պաուլաուսկասը և Ա.Պումբուրսն իրենց հերթին ներկայացրին նշված ոլորտում Լիտվայի և Լատվիայի փորձը և ծառայությունների ձևավորման ընթացքը:

Հյուրերը շրջայց կատարեցին Կրթահամալիրի տարածքով, այցելեցին կրիմինալիստիկայի հատուկ լսարաններ, փորձակայան, դեպքի վայրի զննության վիրտուալ իրականության լսարան, եղան ֆիզիկական պատրաստականության դահլիճներում և այցելեցին ՀՀ ոստիկանության թանգարան:

Ամփոփելով հանդիպման արդյունքները՝ կողմերը պատրաստակամություն հայտնեցին հետագա համագործակցության վերաբերյալ:

ՍԻՐԵԼԻ՛ԿԱՆԱՅՔ, ԹՈՂ ՁԵՐ ՍՐՏԵՐՈՒՄ ՄԻՇՏ ԳԱՐՈՒՆ ԼԻՆԻ

Կինը երջանկության հիավերն է. այսպես են կոչել բնության ամենակատարյալ ստեղծագործությանը՝ կնոջը, ում վստահված է ամենասրբազան առաքելությունը՝ կյանք տալը: Նիկոլայ Նեկրասովը կնոջը համեմատում է խոսքի հետ և ասում. «Կինը մեծ խոսք է: Նրանում օրհորդի անաղարտությունն է, նրանում ընկերուհու ինքնազոհությունն է, նրանում մոր սխրագործությունն է»: Կանայք մեծ դեր ունեն հասարակության մեջ. կարելի է ասել, որ շարժիչ ուժն են, ու հենց այդ պատճառով է, որ գարնանամուտից ընդամենը օրեր անց աշխարհը տոնում է Կանանց միջազգային օրը:

Գարուն, կյանք, սեր, կին... Սրանք գրեթե համարժեք են հնչում մեր ընկալումներում, չէ՞ որ գարնանային եղանակի պես փոփոխական կարող է լինել կինը՝ մեկ «արևոտ» ու ջերմացնող, մեկ «ամպամած» ու «անձրևոտ»՝ վառ գույներով և վառ հույզերով լի: Կինն Աստծուց ժառանգել է արարչագործության պսակը՝ մարդ ծնելու և դաստիարակելու շնորհը:

Քրիստոնյա կնոջ, հայ կնոջ կամ ընդհանրապես կնոջ կերպարի մասին խոսելիս աչքի առաջ առաջին հերթին հայտնվում է Տիրամոր կերպարը: Նա դարեր շարունակ ողջ մարդկության համար եղել է ներշնչանքի աղբյուր: Սուրբ կույսի կյանքը լավագույն օրինակն է բոլոր կանանց համար՝ հեզ, համբերատար, ուժեղ, խոնարհ և առաքինի:

Այսպիսին է կինը, սակայն հայ կինը, իր մեջ ամփոփելով մի ամբողջ ժողովրդի պատիվ ու արժանապատվություն, եզակի է իր տեսակով: Ուժեղ հայ կինը գիտի՝ ինչպես պաշտպանել այն, ինչը թանկ է իր համար: Նա խիզախ է, անվախ ու անսասան իր հավատքի ու արժեքների մեջ:

Կնոջ կերպարը ժողովրդական բանահյուսության մեջ ձևավորվում է Ծովինարից, ով կյանք է տալիս ու սկիզբ դնում մի նոր ազգի: Կինն է բանաստեղծներին ու աշուղներին ոգեշնչել՝ դառնալով նրանց մուսան ու գրչի թանաքը: Ամենայն հայոց բանաստեղծ Թումանյանի գնահատմանբ՝ կինը բնության ամենակատարյալ արտահայտությունն է, ամենամեծ գեղեցկությունն ու պոեզիան: Իսկ ո՞վ կարող է այդքան աստվածային նկարագրել կնոջ ու մոր կերպարը, եթե ոչ Շիրազը...

Մայրե՛ր, ես ձեր խղճին մատաղ, դո՛ւք եք կյանքը նուրբ պահում,

Դո՛ւք եք միակ սփոփանքս, դո՛ւք եք վանքը սուրբ պահում,

Ձեզ երգելով՝ մորս եմ երգում, մորս գովքով՝ ձեզ կերգեմ,

Երկրի աղը մայրն է միայն, խիղճն է կյանքը նուրբ պահում:

Կանացի հմայքն ու գեղեցկությունը գնահատել են բոլորը, ովքեր աչք են ունեցել տեսնելու, սիրտ են ունեցել զգալու և ուղեղ՝ այդ ամենը հասկանալու և ընկալելու համար:

Սիրել՛ի կնայք, մայրե՛ր, քույրե՛ր, շնորհավո՛ր Ձեր միամսյակը: Թող գարնանային այս գեղեցիկ տոնն ազդարարի ձեր կյանքի նոր, վառ ու լուսավոր շրջափուլի մեկնարկը, թող սերը, երջանկությունն ու ջերմությունը լինեն ձեր կյանքի հավերժ ուղեկիցները, թող ձեր կյանքի ամեն օրը լցված լինի ուրախությամբ ու քնքշությամբ, միշտ եղեք սիրված, գնահատված, միշտ եղեք հարգված ու մեծարված և, ամենակարևորը, միշտ եղե՛ք, ուղղակի ԵՂԵ՛Ք...

Մելսիդա Ավետիսյան
իրավագիտության ֆակուլտետ,
2-րդ կուրս

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Մարտի 18-ին Կրթահամալիր էին այցելել «Ալցհայմերի խնամք Հայաստան» կազմակերպության հիմնադիր Ջեյն Մահաքյանը և կազմակերպության այլ աշխատակիցներ: Այցի նպատակն էր քոլեջի առաջին և երկրորդ կուրսի սովորողների համար անցկացնել Ալցհայմերի հիվանդության վերաբերյալ տեղեկատվական հանդիպում:

«Ալցհայմերի խնամք Հայաստան» կազմակերպության ծրագրերի ղեկավար Օֆելյա Կամավոսյանը ներկայացրեց կազմակերպության հիմնադրման պատմությունը, Ալցհայմերի հիվանդության կանխարգելման ուղղությամբ հաջողությամբ իրականացված, ինչպես նաև ընթացքի մեջ գտնվող ծրագրերը:

Բժիշկ Ջեյն Մահաքյանն անդրադարձավ այն հարցին, թե որքան կարևոր է, որպեսզի ոստիկանության աշխատակիցները համապատասխան գիտելիքներ և հմտություններ ունենան իրենց առօրյա աշխատանքում դեմենցիա ունեցող անձանց տարբերելու և նրանց հետ հարաբերվելու համար:

Հանդիպման ավարտին հնչեցին բազմաթիվ հարցեր, որոնց շուրջ ծավալվեցին քննարկումներ:

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՔՐԵԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ՆԻՍՏ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի գիտական խմբակի 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի քաղաքացիական իրավունքի և դատավարության ամբիոնի հետ համատեղ նիստը տեղի ունեցավ սույն թվականի մարտի 15-ին: Օրվա նիստի թեման էր՝ «ՀՀ ֆինանսական համակարգ, բանկային հաշիվ, զեղծարարություններ, խնայողություններ, վարկեր և ապահովագրություն»:

Նիստին հրավիրված էր Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի ռազմավարության մշակման և ֆինանսական իրազեկման մասնագետ Հասմիկ Մակարյանը: Միջոցառման մասնակիցները գիտելիքներ ստացան Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի գործունեության, ՀՀ ֆինանսական համակարգի, բանկային հաշվի, զեղծարարությունների, խնայողությունների, վարկերի և ապահովագրության մասին:

Դասընթացի մասնակիցները Հաշտարարի գրասենյակի կողմից նաև խրախուսական նվերներ ստացան:

Նիստի ընթացքում ծավալվեց ակտիվ և հետաքրքիր քննարկում:

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՏՊԱՎՈՐԻՉ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՏԱԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹՈՒՄ

2024թ. մարտի 9-10-ը Հայաստանի ամերիկյան համալսարանում տեղի ունեցավ առևտրային արբիտրաժին նվիրված ամենամյա դատախաղ-մրցույթը, որին մասնակցության հայտ էր ներկայացրել 8 թիմ՝ Հայաստանում Ֆրանսիական համալսարանից, Երևանի պետական համալսարանից, ՀՀ պետական կառավարման ակադեմիայից, Ամերիկյան համալսարանից, ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայից:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիան ներկայացնող թիմը հանդես եկավ հետևյալ կազմով՝ թիմի ավագ՝ կրթահամալիրի ակադեմիայի առկա անվճար 3-րդ կուրսի սովորող, ոստիկանության սերժանտ Հարություն Հարությունյան, թիմի անդամներ, ակադեմիայի առկա անվճար 3-րդ կուրսի ուսանողուհիներ՝ ոստիկանության սերժանտներ Ժաննա Տեփանոսյան, Լուիզա Խաչատրյան, Սյուզաննա Սարուխանյան, ակադեմիայի առկա վճարովի 3-րդ կուրսի ուսանող Աստղիկ Ավետիսյան: Թիմի ղեկավարն էր Ակադեմիայի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ոստիկանության մայոր Գայանե Մարուքյանը:

Ակադեմիայի թիմը՝ որպես լավագույն աշխատանք ներկայացրած թիմ, գրավոր փուլում հավաքելով առավելագույն միավորներ, արժանացավ առաջին մրցանակին: Բանավոր մրցափուլում Ակադեմիայի թիմը հաղթեց Հայաստանի ամերիկյան համալսարանի թիմին, ակնհայտ առավելություններով առաջ անցավ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի թիմից, իսկ եզրափակչում, մրցելով Երևանի պետական համալսարանի թիմի հետ, արժանացավ երկրորդ մրցանակին՝ այդպիսով հանրապետական դատախաղում նվաճելով երկրորդ մրցանակային տեղը:

ԲԱՆԱՎԵՃԻ ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Մարտի 15-ին Երևանի պետական համալսարանում տեղի ունեցավ ԵՊՀ ՈՒԽ-ի կողմից կազմակերպված Բանավեճի միջբուհական առաջնության առաջին խաղը, որտեղ ՆԳՆ կրթահամալիրի թիմը բանավիճեց Մոսկվայի պետական համալսարանի երևանյան մասնաճյուղի թիմի հետ:

Բանավեճի թեման էր՝ «Խոսքի ազատության երաշխիքները ՀՀ-ում գործնականում արդյունավետ են»: Թեմային «Կողմ» դիրքորոշմամբ հանդես եկավ ՄՊՀ երևանյան մասնաճյուղի թիմը, իսկ «Դեմ» դիրքորոշմամբ՝ Կրթահամալիրի թիմը: Թիմերի դիրքորոշման ընտրությունը կատարվեց վիճակահանությամբ:

Բանավեճի դատավորների գնահատման արդյունքում Կրթահամալիրի թիմը հավաքեց 67.6 միավոր, իսկ ՄՊՀ երևանյան մասնաճյուղի թիմը՝ 55.75 միավոր: Այսպիսով՝ Կրթահամալիրի թիմը բանավեճի միջբուհական առաջնության առաջին փուլը հաղթահարեց հաջողությամբ և անցավ հաջորդ փուլ:

ԻՄ ՄՈԼՈՐԱԿԻ ՀԵՆԱՍՅՈՒՆԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԶԳԱՑՈՒՄՆ Է

«Կրթահամալիրի սովորողները» խորագրով նախագծի շրջանակներում այս անգամ զրուցել ենք ՀՀ ոստիկանության կրթահամալիրի Քոլեջի 2-րդ կուրսի սովորող, ոստիկանության ավագ սերժանտ Գևորգ Վարդանյանի հետ:

- Ինչպիսի՞ն էր փոքրիկ Գևորգը: Երկու խոսքով բնութագրի՛ր քեզ:

- Փոքրիկ Գևորգը չափազանց աշխույժ էր, հետաքրքրասեր, անչափ նպատակասլաց ու կյանքով լի: Հիշում եմ՝ դեռ փոքրուց այն, ինչ մտածում էի, հաջորդ վայրկյանից իրագործում էի: Ես երբեք չեմ ընկճվել, այլ, հակառակը, ճակատ առ ճակատ միշտ պայքարել եմ, որ հասնեմ իմ նպատակներին:

- Դրվագներ, որ տպավորվել են մանկության տարիներից:

- Մանկության տարիներից առանձնահատուկ դրվագներ որպես այդպիսին չեմ կարող նշել, քանի որ լավ չեմ մտաբերում: Բայց վստահ կարող եմ ասել, որ ունեցել եմ անհոգ մանկություն: Ծնողներս արել են ամեն բան, որ մեծանամ լիարժեք ու երջանիկ ընտանիքում: Միևնույն ժամանակ, ապահովել են, որ մանկությունս անցնի սիրով ու ջերմությամբ պարուրված:

- Կպատմե՞ս դպրոցական տարիներից:

- Դպրոցական տարիներից կմտաբերեմ միայն լավագույն հիշողությունները: Բացի այն, որ կրթության առաջին քայլերն եմ կատարել, շնորհակալ եմ դպրոցին, որ հնարավորություն ընձեռեց ճանաչել ինքս ինձ, ինքնուրույն որոշումներ կայացնել, ճանաչել լավն ու վատը, ինչպես նաև հասկանալ իմ կարևորությունը շատ այլ հարցերում:

- «Փոքրիկ իշխան». Անտուան դը Սենտ-Էքզյուպերի... Ինչպիսի՞ն է քո ստեղծած այլ մոլորակը:

-Իմ մոլորակը իմ հոգու արտացոլանքն է: Ես ստեղծել եմ մի մոլորակ, որի հենասյունը պատասխանատվության զգացումն է: Իմ մոլորակում միայն տիրում է աչալրջություն, չափի զգացում և, իհարկե, հարգանքն ու սերը դեպի մարդկային վեհ արժեքներ ու գաղափարներ: Ոչ բոլորը կարող են ներթափանցել իմ մոլորակ և տեսնել այն, ինչ ես ինքս եմ ստեղծել:

- Ի՞նչ ես կարծում, կա՞ն վատ գրքեր:

-Գիրքը մեծ դեր է խաղում մարդու կյանքում: Նրանք մեր անփոխարինելի օգնականներն են: Չկան վատ գրքեր. յուրաքանչյուր գիրք մի կյանքի պատմություն է, որից մենք դասեր ենք քաղում: Գիրքը լավագույն ուսուցիչն է, որը ուղեկից է մեզ ամբողջ կյանքում: Կյանքի որոշակի պահի համար ցանկացած գրքից մենք որևէ դրվագ վերցնում ենք մեզ հետ:

- Քո ընթերցած գրքերից ո՞րն է ամենատպավորիչը:

- Լավագույն գիրքը, որ ընթերցել եմ և կընթերցեմ բազում անգամներ, Չարլի Չապլինի «Իմ կենսագրությունը» գիրքն է: Ինչպես արդեն նշել եմ՝ նպատակասլաց եմ, իսկ այս գիրքն ու իր հեղինակը դրա վառ օրինակն են: Այն հենց այն մասին է, որ չպետք է ճանապարհի կեսին կանգ առնել, այլ պետք է պայքարել՝ հանուն նպատակների և հանուն վաղվա փառքի:

- Ինչի՞ մասին ես երազում կյանքիդ այս շրջանում:

- Կյանքի այս շրջանում միայն ու միայն մտածում եմ մասնագիտական վերելքների և բարձունքներ նվաճելու մասին, ինչպես նաև մասնագիտությանս և պետությանս արժանի, առաջատար մասնագետ դառնալու մասին:

- Խոսենք նախասիրություններից. ի՞նչն է, որ մի քանի ժամով քեզ կտրում է իրական կյանքից:

- Օբյեկտիվ կյանքից կտրվում և այլ աշխարհ եմ տեղափոխվում ընթերցանության, ֆիլմեր դիտելու, սպորտով զբաղվելու և ճանապարհորդելու ժամանակ: Նշեմ նաև, որ ազատ ժամանակս սիրում եմ տրամադրել այլ պետությունների մշակույթը և պատմությունն ուսումնասիրելուն, այսպես ասած՝ զբաղվել ինքնակրթությամբ:

- Ինչպե՞ս ընտրեցիր այս մասնագիտությունը:

- Այս մասնագիտությունը մեծ պատասխանատվություն և անձնուրաց աշխատանք է պահանջում դեպի հասարակություն, դեպի հայրենիք և պետություն: Մեր պետության զարգացման գործում ես ցանկանում եմ ունենալ իմ փոքրիկ, բայց, միևնույն ժամանակ, մեծ ներդրումը:

- Ուսանողական տարիներ. ինչպիսի՞ն է Կրթահամալիրում ուսանողական կյանքը:

- Կրթահամալիրը, կրթական ոլորտում լինելով տարբերվող և առանձնահատուկ, չնայած իր դժվարություններին, չափազանց պատասխանատու և հետաքրքիր է դարձնում ուսանողի կյանքի ամեն վայրկյանը: Շուտով ավարտելու եմ ուսումս. տարիները շատ արագ և աննկատ անցան:

- Ոստիկան. մի քանի բառով բնութագրի՛ր՝ ինչ է քեզ համար այն:

- Այս մասնագիտությունն ընտրած յուրաքանչյուր ոք պետք է գիտակցի և հասկանա իր կարևորությունը տվյալ ոլորտում: Ոստիկան ասելով առաջին հերթին պետք է հասկանալ նվիրված և պատասխանատու գործունեություն՝ հանուն պետության և հասարակության բարեկեցության: Ոստիկան լինելը բարձրագույն կոչում է, ոչ բոլորին է ընձեռված այդ հնարավորությունը. գիտակցել և հասկանալ, որ առաջնայինը քեզ համար դիմացինի կյանքի անվտանգությունն է: Արժանավայել ոստիկանի կերպարը հենց էսպիսին պետք է լինի:

- Ո՞րն է ոստիկան դառնալու քո շարժառիթը:

-Հայրենիքի հզորացման և զարգացման գործում ներդրում ունենալու մեծ ցանկությունն ինձ բերեց ոստիկանություն: Ընտրելով ոստիկանի մասնագիտությունը՝ բացահայտեցի լրիվ նոր ու հետաքրքիր աշխարհ, որտեղ գերակայում են արդարությունն ու հավասարությունը:

- Եթե հնարավորություն տրվեր փոխելու մասնագիտությունդ, ի՞նչ կընտրեիր:

- Հնարավորության դեպքում մասնագիտությունս չէի փոխի մեկ այլով, սակայն կընտրեի ևս մեկ մասնագիտություն, որը հնարավորություն կտար համատեղել ոստիկանի մասնագիտության հետ, և, միևնույն ժամանակ, մեկը մյուսին կօգներ ավելի կատարելագործվել:

- Թեմա, որի շուրջ անդադար կխոսես:

-Կինո և թատրոն. երկու տարբեր աշխարհներ, բայց միևնույն ժամանակ՝ և՛ հետաքրքիր և՛ ուսուցողական, շատ տարբեր զգացողություններ և դրվագներ, որոնք կարելի է անվերջ քննարկել:

- Ո՞րն է կյանքի շարժիչ ուժը քեզ համար:

-Կյանքիս ցանկացած փուլում առաջնային շարժիչ ուժը եղել է և կմնա մարդ լինելը: Դա բարձրագույն արժեք է, որը, անկախ իրավիճակից, միշտ պետք է պահպանվի:

Բլից հարցեր

- Երեք բառ, որով կբնորոշես ինքդ քեզ:

- Հավատրիմ, պատասխանատու, նպատակասլաց:

- Միտք, որն առաջինը ծագում է արթնանալիս:

- Օրվա անելիքների ճիշտ պլանավորում:

-Օրն սկսում ես ժամը...

- Ժամը 07:00-ից:

- Սիրածդ աֆորիզմը:

- Կյանքի յուրաքանչյուր պահ հնարավորություն է (Գ.Գ. Մարկես):

- Սիրելի զբաղմունքդ:

- Ինքնակրթություն:

- Խորհուրդ, որը կտայիր:

- Ցանկության դեպքում անհնարին ոչինչ չկա:

- Իսկ վերջում... (ավելացրու՛ այն, ինչ մտքովդ անցնում է այս պահին):

- Երբեք ուշ չէ...

Բոլորիս ճանապարհները տարբեր են:

Հարցազրույցը վարեց
առաջատար մասնագետ
Լիանա Սահակյանը

ԿՅԱՆՔԻՑ ՀԵՌԱՆԱԼՈՎ 37 ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍԱԿՈՒՄ՝ ՆԱ ՄՆԱՑ ՀԱՆԵԼՈՒԿ

ՌԽՍՀ ժողովրդական արտիստ, հայ ծաղրածու, կրկեսի դերասան, գրող Լեոնիդ Ենգիբարյանը ծնվել 1935 թվականի մարտի 15-ին:

Քանի որ կրկեսում թախիծը հազվադեպ բան է, սակայն նրա հերոսն հիարկե թաղծում էր, գրախոսները նրան կոչեցին «Ծաղրածուն՝ աշունը սրտում»: Բազմաթիվ են Ենգիբարյանի ստեղծած կերպարներն ու իրավիճակները: Նրա նպատակը հանդիսատեսին ծիծաղեցնելը չէր միայն, այլ ստիպել, որ մարդ մտածի, մտածելու և խորհելու առիթ էր տալիս Ենգիբարյան գրողը: Նրա բանաստեղծական արձակը «Առաջին ռաունդ» և «Վերջին ռաունդ» գրքերում է ամփոփված: Լեոնիդ Ենգիբարյանին տրված էր ապրելու ընդամենը 37 տարի, այս տարիների ընթացքում որքա՜ն բան կարող էր անել, չհասցրեց...

Նա սոսկ տաղանդավոր ծաղրածու չէր, նաև տաղանդավոր արտիստ էր, կրկեսային հումորի տեսաբան, ռեժիսոր, շնորհաշատ գրող: Բարեբախտաբար պահպանվել են Ենգիբարյանի ոչ միայն շատ ֆիլմերի և ներկայացումների տեսագրություններ, այլև նրա փոքրիկ հրաշալի նովելները, որոնք այնքան էլ հայտնի չեն հասարակությանը, բայց նա, ով մեկ անգամ ընթերցում է դրանք, այլևս անկարող է մոռանալ:

«Կյանքից հեռանալով 37 տարեկան հասակում՝
նա մնաց հանելուկ»
Յուրի Նիկուլին

ՀՈՎԱՆՈՑ

մի փոքր լռելուց հետո աղջիկն ասաց.

- Բայց մենք տուն չունենք, որտե՞ղ ենք, ապրելու:

Տղան ժպտաց ու պատասխանեց, որ ինքը հովանոց ունի, որ հովանոցը բոլորովին նոր է ու կբացվի, եթե սեղմես կոճակը: Ասաց նաև, որ Հովանոցը հրաշալի տուն է՝ երկուսին շատ հարմար: Ճիշտ է, այդ տունը պատեր չունի, բայց դրա փոխարեն, եթե ձեռքդ մեկնես, հեշտորեն կարող ես իմանալ, թե ի՞նչ եղանակ է դրսում: Տուն Հովանոց՝ հաճելի է ճամփորդել, անձրևին ունկնդրել ու նաև...

Բայց աղջիկը չհարցրեց՝ նաև ի՞նչ: Աղջիկը պարզապես գնաց ուրիշի մոտ, որովհետև այդ ուրիշը հարմարավետ բնակարան ուներ, թեև հովանոց չկար նրա տանը: Ինչների՞ն է պետք. Մարդ երկու տան կարիք չունի:

Հիմա՝ շատ տարիներ հետո, աղջիկը վերջապես հասկացել է, թե ինչ հրաշալի հովանոց է կորցրել: Դա մի փոքրիկ օդապարիկ էր, որից բռնելով՝ կարելի է թռչել, հատկապես՝ անձրևոտ օրերին... Եվ աղջիկը թախծում է իր՝ արդեն երեքսենյականոց բնակարանում, որովհետև որքան մեծ է բնակարանը, այնքան իրարից հեռու են այնտեղ ապրողները: Ու երբ անձրև է գալիս, աղջիկն ուզում է պատուհանից դուրս նետվել՝ հովանոց գտնելու հույսով: Բայց մի՞թե տասնհինգերորդ հարկից կարող ես գտնել կորցրածդ:

ՄԻ՛ ՆԵՂԱՑՐԵՔ ՄԱՐԴՈՒՆ

Իզուր, հենց այնպես մարդուն պետք չէ նեղացնել, որովհետև դա շատ վտանգավոր է: Իսկ եթե հանկարծ նա մոցա՞րտն է: բացի այդ, դեռ չի հասցրել ոչինչ գրել, անգամ՝ Թուրքական մարշը: Դուք նրան կնեղացնեք, և նա ընդհանրապես ոչինչ չի գրի: Չի գրի մեկը, հետո՝ մյուսը, և աշխարհում կպակասի գեղեցիկ երաժշտությունը, կպակասեն լուսավոր զգացմունքներն ու մտքերը, իսկ դա նշանակում է՝ և լավ մարդիկ:

Իհարկե, ոմն մեկին կարելի է նեղացնել, չէ՞ որ բոլորը մոցարտ չեն, բայց, այնուամենայնիվ, իսկ եթե հանկարծ...

Մի՛ նեղացրեք մարդուն, պետք չէ՛:

Դուք այնպիսին եք, ինչպիսին՝ նա:

Պահպանե՛ք միմյանց, մարդի՛կ:

Լիանա Սահակյան

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

Ուրբ զատիկը քրիստոնեական ամենահին և կարևոր տոնն է՝ Հիսուս Քրիստոսի Հարության տոնը. իրադարձություն, որն աստվածաշնչյան ողջ պատմության կենտրոնն է: Այն շարժական տոն է, և այս տարի նշվեց մարտի 31-ին:

Երևի թե բոլորն էլ գիտեն, որ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը կոչվում է նաև Զատիկ, որը նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեղքերից և վերադարձ առ Աստված: Զատիկը Հայ Առաքելական Ս. Եկեղեցու 5 տաղավար տոներից մեկն է: Հիսուս Քրիստոսի խաչելությունից և մահից հետո՝ երեկոյան, բարեպաշտ մարդիկ Նրա մարմինն իջեցրին խաչից և դրեցին վիմափոր գերեզմանի մեջ՝ փակելով մեծ քարով: Երեք օր հետո՝ կիրակի առավոտյան, յուղաբեր կանայք՝ Մարիամ Մագդաղենացին, Հակոբի մայր Մարիամը և Սողոմեն, գնացին գերեզման՝ անուշաբույր յուղերով օծելու Քրիստոսի մարմինը, սակայն զարմանքով տեսան, որ քարայրի մուտքի քարը հեռացված է, իսկ գերեզմանը՝ թափուր: Մինչ նրանք տարակուսում էին, երևացին երկու հրեշտակներ և ասացին. «Ինչո՞ւ եք ողջին մեռելների մեջ փնտրում: Այստեղ չէ, այլ Հարություն առավ» (Ղուկ. 24:5-6):

Հարության լուրը կանայք ավետեցին առաքյալներին, որից հետո Հիսուսը երևաց նրանց: Քրիստոսի Հարությունը դարձավ քրիստոնեական վարդապետության և հավատի հիմքը: «Եթե մեռելների հարություն չկա, ապա և Քրիստոս հարություն չի առել: Եվ եթե Քրիստոս Հարություն չի առել, իզուր է մեր քարոզությունը, իզուր է և ձեր հավատը» (Ա Կորնթ. 15:13-14):

Ս. Հարության տոնի նախընթաց երեկոյան եկեղեցիներում մատուցվում է Ճրագալույցի Ս. Պատարագ, որով սկսվում են զատկական տոնակատարությունները: Առավոտյան եկեղեցիներում կատարվում է ժամերգություն, Անդաստանի արարողություն, ապա՝ մատուցվում տոնական Ս. Պատարագ, հավատացյալները միմյանց ողջունում են «Քրիստոս Յարեաւ ի մեռելոց» ավետիսով, պատասխանում՝ «Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»:

Զատկի տոնին հավատացյալները ձու են ներկում: Ներկված ձուն համարվում է Հարության և նոր կյանքի խորհրդանիշ: Կարմիր գույնը խորհրդանշում է խաչյալ Հիսուսի կենդանարար արյունը, որ թափվեց մարդկության փրկության համար: Ըստ Ս. Գրիգոր Տաթևացու՝ «Միայն Զատկին ենք ձու ներկում, որովհետև ձուն օրինակ է աշխարհի», և ինչպես իմաստուններն են ասում. «Դրսի կեղևը նման է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղնուցն էլ երկիրն է: Իսկ կարմիր գույնը խորհրդանշում է Քրիստոսի արյունը: Եվ մենք կարմիր ձուն մեր ձեռքերի մեջ առնելով՝ հռչակում ենք մեր փրկությունը»:

Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը Հայ Եկեղեցին նշում է հիսուն օր շարունակ՝ մինչև Հոգեգալստյան տոն (Պենտեկոստե): Այս ընթացքը կոչվում է Հինանց շրջան կամ Հինունք, որը ծագում է «հիսունք» բառից:

Հինանց շրջանի քառասուն օրերը հրաուցյալ Քրիստոսի՝ աշակերտներին երևալու և Աստծո արքայության մասին վկայություններ տալու հիշատակությունն են (Գործք 1:3), իսկ վերջին տասն օրերը նվիրված են Քրիստոսի Համբարձմանը:

Հինանց շրջանն ավարտվում է Հոգեգալստյան տոնով: Համբարձումից տասն օր հետո, ըստ Քրիստոսի խոստման, առաքյալների վրա իջավ Աստծո Ս. Հոգին, և զորացած առաքյալները վկայեցին Քրիստոսին ամբողջ աշխարհով:

ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ՊԱՏՈՒՀԱՆ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲՈՒՐԳԵՐԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Գիզայի սարահարթում գտնվող Եգիպտական բուրգերի առեղծվածը մինչ այսօր բացահայտված չէ, 1000-ավոր մասնագետներ հաստատում են, որ նույնիսկ այսօր՝ այս գերզարգացած ժամանակներում շինարարական որևէ ընկերությունն չի կարող կառուցել այնպիսի շինություն, ինչպես են Գիզայի անապատում բազմած այդ հրաշալիքները: Եվ հենց այստեղ էլ օգնության է հասնում այն տեսակետը, որ բուրգերը սովորական մարդկանց ձեռքի գործ լինել չեն կարող, և որ դրանք կառուցվել են կա՛մ այլմոլորակայինների, կա՛մ Ատլանտիդայի բնակիչների կողմից: Կարծիք կա նաև, որ այլմոլորակայինները ոչ միայն կառուցել, այլ նաև մինչև այսօր հսկում ու պահպանում են բուրգերում թաղված փարավոններին ու նրանց ահռելի հարստությունը: Կա եգիպտական մի շատ հայտնի կարգախոս՝ նա, ով կխախտի փարավոնի հանգիստը, կդատապարտվի մահվան: Եվ շատ դեպքերում հենց այդպես էլ եղել է: Բազմաթիվ հետազոտողներ տարբեր պատճառներով մահացել են հենց ուսումնասիրություններ կատարելու ժամանակ: Պատահականությո՞ւն է, թե՞ գործող գերբնական զորություն...

Պնդել չեն կարող: Այն, ինչ բացահայտված չէ, հավերժ խորհրդավոր է: Ըստ գիտնականների՝ եգիպտական բուրգերը կառուցվել են մ.թ.ա. 28-16-րդ դարերում: Որոշ հետազոտողներ պնդում են, որ դրանք կառուցել են ստրուկները, սակայն ինչպե՞ս կարող էին այդքան ճշգրիտ օբյեկտները կառուցվել ստրուկների կողմից: Կա տեսակետ, որ դրանց հատակագիծը կազմել են ժամանակի ամենահմուտ եգիպտացի ճարտարապետները: Իսկ ինչպե՞ս են կարողացել իրականացնել հատակագիծն ամենայն ճշտությամբ այն ժամանակներում, երբ, համաձայն շատ աղբյուրների, գոյություն չի ունեցել ոչ մի տեխնիկական սարք:

Այս բոլոր անպատասխան հարցերը պատճառ են դարձել տարբեր վարկածների ստեղծման համար:

Ոմանց ենթադրությունների համաձայն՝ եգիպտական բուրգերի նման ահռելի ու ճարտարապետական տեսակետից կատարյալ կառույցները տեղանքում հայտնվել են շատ հանկարծակի կերպով: Նման անթերի մշակված քարե սալիկներ պատրաստելու համար եգիպտացի շինարարներին բավականին երկար ժամանակ էր հարկավոր: Ոչ միայն մշակումը, այլ նաև այդ հսկայածավալ ու մեծաքանակ քարերի տեղափոխումը պարզապես անհնար էր իրագործել ինչպես այդ ժամանակաշրջանում, այնպես էլ հիմա՝ մեր օրերում: Գիտնականների մի մեծ բանակ համոզված է, որ հենց արտերկրային ուժերի ազդեցության շնորհիվ էլ բուրգերը կարևոր ու հսկայական տեղեկություն են պարունակում արեգակնային համակարգի, տիեզերքի անսահմանության և մարդ արարածի մասին: Նրանց կարծիքով՝ տեղեկությունը կոդավորված այդ ահռելի երկրաչափական մարմնի կառույցների մեջ է: Գիզայի բրգային համալիրի երեք բուրգերի գագաթները միանգամայն համընկնում են որսորդ համաստեղության 3 վառ աստղերի հետ: Բացի այդ, բուրգերի ներսում միշտ նույն ջերմաստիճանն է, և այնտեղ մարդիկ և սննդամթերքն ավելի թարմ են պահպանվում, իսկ բույսերն ավելի արագ են աճում: Նշանակում է, որ այս ամենն ուղղակի չի կարող պատահականություն լինել:

Ի՞նչ խորհուրդ է գործում այստեղ. արդյո՞ք մեզնից 1000-ավոր տարիներ առաջ երկիր են ժամանել այլ աշխարհի բնակիչներն ու օգնել մարդկությանը սկիզբ դնելու մեծ քաղաքակրթությանը: Ներերկրի քաղաքակրթությունների թեման մարդկությանն ուղեկցում է անհիշելի ժամանակներից: Անգամ ժայռապատկերներում, հնագույն առասպելներում, էպոսներում, հեքիաթներում և կրոնների սուրբ գրքերում ևս կան այդպիսի հիշատակություններ: Ասենք՝ քրիստոնեական Աստվածաշնչում մարգարեներ կան, որոնք վերերկրային քաղաքակրթությունների մասին են հիշատակում: Ապացուցելու խնդիր դրված չէ, ընդամենը դրված է հասնելու որոշակի աստիճանի, երբ որ մարդու համար կբացահայտվի նաև այդ էջը: Գիզայի հովտի ամենամեծ հանելուկը, այնուամենայնիվ, մեծ սֆինքսն է: Կարծիք կա, որ այն տեղադրվել է ընդհանուր համալիրի շինարարությունից առաջ, ըստ այդ տեսակետի՝ բուրգի վրա սֆինքսի դեմքը այլ մոլորակայինների կողմից քանդակված է որպես օրինակ՝ մնացած պատրաստվող բուրգերի համար:

Պետք է նշել, որ եգիպտական բուրգերը միակ առեղծվածային բուրգերը չեն մեր մոլորակում: 1990-ականների սկզբում «Բերմուդյան եռանկյունին» ուսումնասիրող գիտնական Վերգալ Մեյերը մի բուրգ գտավ այնտեղ, որը մոտ 3 անգամ ավելի մեծ է, քան Քեոփսի բուրգը: Այս անհայտ բուրգը գտնվում է 600մ խորության վրա, իսկ նրա մակերևույթը նման է հաստ ապակու: Հետազոտողի խոսքով՝ դա ստեղծվել է մոտ 500 տարի առաջ և ուղղակի կապ ունի «Բերմուդյան եռանկյունու» աղետների հետ, բայց ինչպե՞ս... Վերգալ Մեյերն այդ մասին հանրության առջև խոսեց միայն մեկ անգամ, որից հետո ԱՄՆ կառավարությունն այլևս թույլ չտվեց քննարկել նոր հայտնաբերված բուրգը: Ինչո՞ւ, գուցե կա մի բան, որ Երկիր մոլորակի բնակիչները չպետք է կամ չեն կարող իմանալ:

Ահա սրանք էին հայտնի եգիպտական բուրգերին շրջապատող գաղտնիքների ու հարցերի մի ամենափոքր մասը, իսկ դուք ինքներդ որոշեք՝ հավատա՞լ, թե՞ չհավատալ ներկայացված վարկածներին:

Ա. Ք.

ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Ինչպես բոլորս գիտենք՝ մեր ակադեմիայի առավելություններից մեկն այն է, որ այստեղ հնարավորություն ունենք ստանալու բարձրագույն իրավագիտական կրթություն: Սակայն այս գործոնն ինձ համար երբևէ կողմնորոշիչ չի եղել: Իմ գերնպատակն էր դառնալ ոստիկան: Մեկ-մեկ ինքս ինձ հարց եմ տալիս՝ ե՞րբ եղավ այդ «բեկումնալից» պահը, երբ ես վճռեցի ապագաս կապել այս մասնագիտության հետ: Իսկ այս հարցի պատասխանը գտնելու համար մենք պետք է վերադառնանք Անգելինայի մանկություն: Դեռևս 9րդ դասարանում ինձ մոտ հետաքրքրություն էին առաջացնում ոստիկանական գործունեության դրվագներ պարունակող ֆիլմերն ու հեռուստասերիալները: Մի օր ես իմ մեջ ուժ գտա ծնողներիս հայտնելու, թե որ ոլորտի մասնագետ եմ ցանկանում դառնալ: Այս քայլն ինձնից գերբնական վստահություն էր պահանջում, քանզի ես գիտեի, որ նրանք ինձ պատկերացնում էին բացառապես բժշկուհու կարգավիճակում: Եվ գիտե՞ք ինչ... մասնավորապես մայրիկիս կողմից իմ այս որոշումը ողջունելի եղավ: Նա պատմեց ինձ, որ ինքը ևս ցանկանում էր դառնալ ոստիկան, սակայն դա նրան չհաջողվեց: Այս հանգամանքն առավելապես մղեց ինձ իրագործելու իմ և մայրիկիս չիրագործված երազանքը: Եվ այժմ ես սովորում եմ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանության ակադեմիայի 3րդ կուրսում: Ամբողջ ծավալով գիտակցելով ինձ վրա դրված պատասխանատվությունը և հավատարիմ մնալով երդմանս՝ պատրաստակամ եմ ծառայել երկրիս: Պատիվ ունեմ...

Անգելինա Հովհաննիսյան
Ակադեմիա, 3-րդ կուրս,
ոստիկանության սերժանտ

ՀԱՆՃԱՐՆԵՐԸ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

Եթե աշխարհում չլինեին կանայք, աշխարհի բոլոր փողերն իմաստ չէին ունենա

Էրիխ Օստերֆելդ

***

Կնոջը երբեք չի կարելի զինաթափել հաճոյախոսությամբ, տղամարդուն միշտ կարելի է:

Ուայլդ

***

Կանայք մահանում են տղամարդկանցից ուշ, քանի որ նրանք միշտ ուշանում են:

Անանուն Հեղինակ

***

Խարխուլ մակույկով հանձնվիր ծովին, քան թե հավատա կնոջ երդումին:

Ավետիք Իսահակյան

***

Ամեն կին պետք է ունենա չորս ընտանի կենդանի. ջրաքիս՝ զգեստապահարանում, յագուար՝ ավտոտնակում, վագր՝ մահճակալում, և ավանակ, որ այս ամենի համար վճարի:

Փերիս Հիլթոն

***

Լինել ամբողջովին անկեղծ՝ կնոջ համար նույնն է, ինչ հայտնվել մարդկանց միջավայրում առանց զգեստի...

Ստենդալ

***

Աստվածային գեղեցկություն ունեցող կինը հաճախ ունի սատանայի բնավորություն:

Սևրուս

***

Կանանց հարգելը պարտականություն է, որին ամեն մի ազնիվ մարդ պետք է ենթարկվի իր ծննդյան օրվանից:

Լոպե դե Վեգա

***

Կանայք միշտ ոգեշնչում են տղամարդկանց մեծ գործերի, սակայն միշտ խանգարում են դրանք իրագործել:

Օսկար Ուայլդ

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՀԱՐՑԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

1. Տղամարդը գնում է գնացքով և երազում տեսնում, որ նա նստած է հատակի վրա, իսկ հատակի տախտակները պոկվում ու ընկնում են ցած, ու միայն մի տախտակ է մնացել: Ի՞նչ պետք է անի տղամարդը, որպեսզի չընկնի:
2. Ո՞վ է յուրաքանչյուրին ցույց տալիս իր դեմքը, բայց ինքը դեմք չունի:

Նախորդ համարում զետեղված հարցերի պատասխանները

1. Ձայլամները չեն թռչում:
2. Աթենա- իմաստության և ռազմի աստվածուհի

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիր ՊՈՒԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73: Գրանցման վկայական՝ 29021003884:

Տպագրվել է «Աստղիկ Գրատուն» հրատարակչությունում: Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ: Ստորագրված է տպագրության 26.02. 2024թ.: Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի: Գլխավոր խմբագիր՝ Արուսյակ Քոչարյան